ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.08.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2020/186

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Մասնակից՝ «Ստանդարտ Գրուպ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Ստանդարտ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ն. Հակոբյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/47» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, յուղերի և քսուքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 24.07.2020թ.-ի թիվ 26/26-1/11119-2020 գրությամբ «Ստանդարտ Գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 23.07.2020թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/2281-2020 գրության հիման վրա, 24.07.2020թ.-ին «Ստանդարտ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 24.07.2020թ.-ին:

24.07.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/186 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

31.07.2020թ.-ին և 07.08.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 31.07.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 07.08.2020թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 23.07.2020թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/2281-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/47» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Ստանդարտ Գրուպ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից):

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.9 կետի համաձայն.

«Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյուն¬քում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ

հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:»

Մասնակցի կողմից հայտով ներկայացվել է Հավելված 1՝ Դիմում-հայտարարություն, որում նշված չի եղել թե մասնակիցը որ երկրի ռեզիդենտ է հանդիսանում, որը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ գնահատվել է չհամապատասխանող Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Վերոնշյալ անհամապատասխանությունը շտկելու համար Մասնակցին անհրաժեշտ էր նշել թե որ երկրի ռեզիդենտ է հանդիսանում:

Մասնակցի կողմից հայտով ներկայացվել է Հավելված N 1.1, որի 2-րդ, 3-րդ, 12-րդ և 14-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերում նշված են եղել.

2-րդ չափաբաժին՝ ԳՕՍ 8581-78 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ տեղեկատվությունը:

3-րդ չափաբաժին՝ ՏՊ 38.1011282-89 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ տեղեկատվությունը:

12-րդ չափաբաժին՝ ՏՊ 0253-028-44918199-2006 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ տեղեկատվությունը:

14-րդ չափաբաժին՝ ՏՊ 38 001347-83 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ տեղեկատվությունը, որոնք Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ գնահատվել են չհամապատասխանող Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Վերոնշյալ անհամապատասխանությունները շտկելու համար Մասնակցին անհրաժեշտ էր հստակեցնել առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը՝ բացառելով «կամ համարժեք» բառակապակցությունը, իսկ ըստ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի ծանոթություն բաժնի՝ եթե Ընթացակարգի ժամանակ ներկայացվում է այլ ՏՊ-ով ապրանք, որը սահմանված չէ ընթացակարգի հրավերով, ապա Մասնակցի կողմից պետք է ներկայացվի նաև նշված ՏՊ կրկնօրինակը:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.10 կետի համաձայն.

«Եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:»

Ընթացակարգով սահմանված ժամկետում Մասնակցի կողմից վերոնշյալ անհամապատասխանությունները շտկվել են, բացառությամբ.

1. Մասնակցի կողմից ներկայացված՝ շտկված Հավելված N 1.1-ի՝ 2-րդ, 3-րդ, 12-րդ և 14-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերում ներկայացվել են Ընթացակարգի հրավերով սահմանված՝ 2, 3, 12 և 14-րդ չափաբաժինների գնման առարկաների տեխնիկական բնութագրերից տարբերվորդ տեխնիկական բնութագրեր: Մասնավորապես.

Ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժնով սահմանված է եղել՝ ԳՕՍ 8581-78 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ, իսկ մասնակիցը ներկայացրել է՝ ՏՊ 19.20.29-034-43002222-2019, սակայն չի ներկայացրել նշված ՏՊ-ի կրկնօրինակը:

Ընթացակարգի հրավերի 3-րդ չափաբաժնով սահմանված է եղել՝ ՏՊ 38.1011282-89 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ, իսկ Մասնակիցը ներկայացրել է՝ ՏՊ 0253-043-38649909-2014, սակայն չի ներկայացրել նշված ՏՊ-ի կրկնօրինակը:

Ընթացակարգի հրավերի 12-րդ չափաբաժնով սահմանված է եղել՝ ՏՊ 0253-028-44918199-2006 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ, իսկ Մասնակիցը ներկայացրել է՝ ՏՊ 0253-061-38649909-2015, սակայն չի ներկայացրել նշված ՏՊ-ի կրկնօրինակը:

Ընթացակարգի հրավերի 14-րդ չափաբաժնով սահմանված է եղել՝ ՏՊ 38 001347-83 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ, իսկ Մասնակիցը ներկայացրել է՝ ՏՊ 19.20.29-034-43002222-2019, սակայն չի ներկայացրել նշված ՏՊ-ի կրկնօրինակը:

2. Իր կողմից հաստատվող՝ շտկված փաստաթղթերը մասնակիցը չի ստորագրել ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակցի համար նախատեսված էլեկտրոնային թվային ստորագրությամբ, այլ այդ փաստաթղթերը ներկայացրել է «Ստանդարտ Գրուպ» ՍՊԸ կողմից հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով, իսկ ըստ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնա¬կիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստա¬թղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, Մասնակցի հայտը գնահատել է անբավարար (անհամապատասխան) Ընթացակարգի հրավերի պահանջներին և մերժել է վերջինիս հայտը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/47» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Ստանդարտ Գրուպ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Ստանդարտ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 24.07.2020թ.-ին գրությամբ դիմել է «Ստանդարտ Գրուպ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.07.2020թ.-ի թիվ 26/26-1/11119-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստին նաև ներկայացրել է գրավոր դիրքորոշում, հայտնելով հետևյալը.

««Ստանդարտ Գրուպ» ՍՊ ընկերությունը ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/47» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցելու հայտ է ներկայացրել:

Վերոնշյալ գնման ընթացակարգի ընթացքում արձանագրվել է ՀՀ պաշտպանության նախարարության «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/47» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 2020թ. հունիսի 25-ի N 1 որոշմամբ հաստատված «ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Յուղեր, քսուքներ»-ի ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման» հրավերի (այսուհետ՝ Հրավեր) պահանջների նկատմամբ որոշակի անհամապատասխանություններ:

1. «Ստանդարտ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից հայտով ներկայացվել է Հավելված 1՝ Գիմում-հայտարարություն, որում նշված չի եղել թե մասնակիցը որ երկրի ռեզիդենտ է

հանդիսանում, որը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ գնահատվել է չհամապատասխանող Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

2. «Ստանդարտ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից հայտով ներկայացվել է Հավելված N 1.1, որի 2-րդ, 3-րդ, 12-րդ և 14-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերում նշված են եղել.

2-րդ չափաբաժին՝ ԳՕՍ 8581-78 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ տեղեկատվությունը:

3-րդ չափաբաժին՝ ՏՊ 38.1011282-89 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ տեղեկատվությունը:

12-րդ չափաբաժին՝ ՏՊ 0253-028-44918199-2006 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ տեղեկատվությունը:

14-րդ չափաբաժին՝ ՏՊ 38 001347-83 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ տեղեկատվությունը, որոնք Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ գնահատվել են չհամապատասխանող Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Վերոնշյալ անհամապատասխանությունները շտկելու համար «Ստանդարտ Գրուպ» ՍՊ ընկերությանն անհրաժեշտ էր հստակեցնել առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը՝ բացառելով «կամ համարժեք» բառակապակցությունը, իսկ ըստ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի ծանոթություն բաժնի՝ եթե Ընթացակարգի ժամանակ ներկայացվում է այլ ՏՊ-ով ապրանք, որը սահմանված չէ ընթացակարգի հրավերով, ապա Մասնակցի կողմից պետք է ներկայացվի նաև նշված ՏՊ կրկնօրինակը:

Ընթացակարգով սահմանված ժամկետում «Ստանդարտ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից վերոնշյալ անհամապատասխանությունները շտկվել են, բացառությամբ.

1. «Ստանդարտ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված՝ շտկված Հավելված N 1.1-ի՝ 2-րդ, 3-րդ, 12-րդ և 14-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերում ներկայացվել են Ընթացակարգի հրավերով սահմանված՝ 2, 3, 12 և 14-րդ չափաբաժինների գնման առարկաների տեխնիկական բնութագրերից տարբերվորդ տեխնիկական բնութագրեր: Մասնավորապես՝ Ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժնով սահմանված է եղել՝ ԳՕՍ 8581-78 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ, իսկ մասնակիցը ներկայացրել է՝ ՏՊ 19.20.29-034-43002222-2019, սակայն չի ներկայացրել նշված ՏՊ-ի կրկնօրինակը:

Ընթացակարգի հրավերի 3-րդ չափաբաժնով սահմանված է եղել՝ ՏՊ 38.1011282-89 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ, իսկ Մասնակիցը ներկայացրել է՝ ՏՊ 0253-043-38649909-2014, սակայն չի ներկայացրել նշված ՏՊ-ի կրկնօրինակը:

Ընթացակարգի հրավերի 12-րդ չափաբաժնով սահմանված է եղել՝ ՏՊ 0253-028^44918199- 2006 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ, իսկ Մասնակիցը ներկայացրել է՝ ՏՊ 0253- 061-38649909-2015, սակայն չի ներկայացրել նշված ՏՊ-ի կրկնօրինակը:

Ընթացակարգի հրավերի 14-րդ չափաբաժնով սահմանված է եղել՝ ՏՊ 38 001347-83 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ, իսկ Մասնակիցը ներկայացրել է՝ ՏՊ 19.20.29-034- 43002222-2019, սակայն չի ներկայացրել նշված ՏՊ-ի կրկնօրինակը:

Իր կողմից հաստատվող՝ շտկված փաստաթղթերը «Ստանդարտ Գրուպ» ՍՊ ընկերությունը չի ստորագրել ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակցի համար նախատեսված էլեկտրոնային թվային ստորագրությամբ, այլ այդ փաստաթղթերը ներկայացրել է «Ստանդարտ Գրուպ» ՍՊԸ կողմից հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, «Ստանդարտ Գրուպ» ՍՊ ընկերության հայտը գնահատել է անբավարար (անհամապատասխան) Ընթացակարգի հրավերի պահանջներին և մերժել է վերջինիս հայտը:

Վերոգրյալը հաշվի առնելով նախաձեռնվել է «Ստանդարտ Գրուպ» ՍՊ ընկերությանը գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

Ամբողջությամբ առարկում ենք նշվածի դեմ՝ հետևյալ հիմքերով և հիմնավորումներով: Հրավերի 8.14-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելուիրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ: Ընդ որում, եթե մասնակցի գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում

հրավերով նախատեսված փաստաթղթերը, կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց, գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Այսպես, մասնակցին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու հիմքը, այն է՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց, հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Հրավերի 8.10-րդ կետի 1-ին մասի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի 8.9-րդ կետի 1-ին մասի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ

աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Տվյալ պարագայում, «Ստանդարտ Գրուպ» ՍՊ ընկերությանը գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացի հիմքում դրվել է այն փաստական հանգամանքները, որ վերջինիս կողմից Հրավերով սահմանված ժամկետում մասնակիորեն է վերացվել արձանագրված անհամապատասխանությունները, ինչպես նաև այն, որ շտկված փաստաթղթերը «Ստանդարտ Գրուպ» ՍՊ ընկերությունը չի ստորագրել ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակցի համար նախատեսված էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որոնք, ըստ Հրավերի 8.10-րդ կետի 1-ին մասի, հայտի մերժման հիմք է, ոչ թե գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Ներառելու գործընթաց Նախաձեռնելու հիմք:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ հստակ կարող ենք արձանագրել, որ «Ստանդարտ Գրուպ» ՍՊ ընկերությանը գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց իրավաչափ չէ և չի բխում «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներից:»:

4. <u>ՍՑ-LO-2020/186 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից յուղերի և քսուքների ձեռքբերման նպատակով 26.06.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/47» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ստանդարտ Գրուպ» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությամբ, հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/47» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման 2-րդ, 3-րդ, 12-րդ և 14-րդ չափաբաժիններին և Հրավերի

պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ: Մասնակիցը նաև հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/47» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 06.07.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ստանդարտ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Հավելված 1.1-ով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, ըստ որի 2-րդ, 3-րդ, 12-րդ և 14-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերում նշված է եղել՝

- 2-րդ չափաբաժին՝ ԳՕՍՏ 8581-78 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ տեղեկատվությունը,
- 3-րդ չափաբաժին՝ ՏՊ 38.1011282-89 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ տեղեկատվությունը,
- 12-րդ չափաբաժին՝ ՏՊ 0253-028-44918199-2006 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ տեղեկատվությունը,
- 14-րդ չափաբաժին՝ ՏՊ 38 001347-83 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ տեղեկատվությունը, որոնք չեն համապատասխանել ընթացակարգի հրավերի պահանջներին, անհրաժեշտ է եղել հստակեցնել՝ բացառելով «կամ համարժեք» բառակապակցությունը, իսկ եթե մրցույթի ժամանակ ներկայացվում է այլ ՏՊ-ով ապրանք, որը սահմանված չէ ընթացակարգի հրավերով, ապա պետք է ներկայացվեր նաև նշված ՏՊ-ի կրկնօրինակը, ինչպես նաև Հավելված 1-ում նշված չի եղել թե մասնակիցը որ երկրի ռեզիդենտ է հանդիսանում:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը 09.07.2020թ.-ին, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշել է կասեցնել գնման գործընթացը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 09.07.2020թ.-ին Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է նույնաբովանդակ ծանուցում:

vii. 21.07.2020թ.-ին կայացած նիստում Հանձնաժողովն արձանագրել է, որ Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, բացառությամբ՝

- 2-րդ չափաբաժնով սահմանված է եղել՝ ԳՕՍՏ 8581-78 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ, Մասնակիցը ներկայացրել է՝ ՏՊ 19.20.29-034-43002222-2019, սակայն չի ներկայացրել նշված ՏՊ-ի կրկնօրինակը,
- 3-րդ չափաբաժնով սահմանված է եղել ՏՊ 38.1011282-89 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ, Մասնակիցը ներկայացրել է՝ ՏՊ 0253-043-38649909-2014, սակայն չի ներկայացրել նշված ՏՊ-ի կրկնօրինակը,
- 12-րդ չափաբաժնով սահմանված է եղել ՏՊ 0253-028-44918199-2006 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ, Մասնակիցը ներկայացրել է՝ ՏՊ 0253-061-38649909-2015, սակայն չի ներկայացրել նշված ՏՊ-ի կրկնօրինակը,
- 14-րդ չափաբաժնով սահմանված է եղել՝ ՏՊ 38 001347-83 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ, Մասնակիցը ներկայացրել է՝ ՏՊ 19.20.29-034-43002222-2019, սակայն չի ներկայացրել նշված ՏՊ-ի կրկնօրինակը, ինչպես նաև շտկված փաստաթղթերը Մասնակիցը չի ստորագրել ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակցի համար նախատեսված էլեկտրոնային թվային ստորագրությամբ, այլ այդ փաստաթղթերը ներկայացրել է «Ստանդարտ Գրուպ» ՍՊԸ կողմից հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

viii. Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, որոշել է Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.07.2020թ.-ի թիվ 26/26-1/11119-2020 գրությամբ «Ստանդարտ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ (21.05.2020թ.-ի թիվ 778-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում

են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում՝ Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, ընդ որում, որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից յուղերի և քսուքների ձեռքբերման նպատակով 26.06.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/47» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Ստանդարտ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ և Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, 09.07.2020թ.-ին մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել է Մասնակցին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ:

Մասնակիցը սահմանված ժամկետում թերի է շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչով պայմանավորված, Հանձնաժողովը, հիմք

ընդունելով Կարգի 42-րդ կետի դրույթները, որոշել է Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն

հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Ստանդարտ Գրուպ» ՍՊԸ-ն թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությամբ, հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/47» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման 2-րդ, 3-րդ, 12-րդ և 14-րդ չափաբաժիններին և Հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ: Մասնակիցը նաև հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/47» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ստանդարտ Գրուպ» ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամանակահատվածում, թերի շտկելով արձանագրված անհամապատասխանությունները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.07.2020թ.-ի թիվ 26/26-1/11119-2020 գրությամբ «Ստանդարտ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/186 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Ստանդարտ Գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**